ւանենց Սեղբոս Ամիրայն, եւ ասեն՝ եթէ կամիս զի այս իրք բարւոք կատարեսցի, է՛կ լե՛ր դու նախ Պատրիարք Կոստանդինուպոլսոյ, և ապա դու ինքնին զո՛ ոք և կամիս, արա Պատրիարք Երուսաղէմի։ Այլ նորա հրաժարեալ՝ ասէ՝ այդմ չէ հնար լինել, զի եթէ յետ տարւոյ միոյ ընկեսցեն զիս 'ի Պատրիարքութենէ, որպէս արարին բազմաց, ես յայնժամ ուստի՞ կարացից վճարել զպարտսն Երուսաղէմի, և զերաշխաւորութիւնս իմ ընուլ։ Պատասխանի ետուն և ասեն, ոչ թոյլ տամք մեք այդմ, և կամք 'ի պատրաստի ոչ միայն պաշտպանել զքեզ, այլ եւ զամենայն արգելսն վանել, և զամենայն հնարս հնարել, մինչեւ զերծանիցիս դու յերաշխաւորութենէ քումմէ։ Ընդ այս հաւանեցաւ և Յովհաննէս Գանձակեցի, և խոստացաւ կամովին հրաժարիլ 'ի Պատրիարքութենէ։

Եւ իբրեւ յանձն առ Յովհաննէս վարդապետ Բաղիշեցի զինդիր նոցա, նոյն ժամայն նստուցին զնա Պատրիարք, ոչ գոլով դեռ եւս եպիսկոպոս, որ եւ իբր մականուամբ Կոլոթ կոչեցաւ (1715) 'ի 16 Սեպտեմբեր ամսոյ, յաւուր ուրբաթու։ Եւ 'ի վաղիւ անդր նա ինքն Յովհաննէս ետ յիշատակել առաջի սեղանոյն զԳրիգոր վարդապետ, զառաջնորդ Ս. Կարապետին՝ իբր Պատրիարք Երուսաղէմի, և զնոյն ետ առնել յայլ եկեղեցիս եւս ծանուցմամբ։

Այլ մինչդեռ յԵրուսաղէմ էր Յովհաննէս վարդապետ, եկն յարքունուստ հրաման առ դատաւորն Երուսաղէմի, որով խնդրէր տեղեկութիւն զորպիսութենէ Պալիքեսիրցի Յովհաննէսի, որ ամօք յառաջ աքսորեալ էր յԱվրատ ատասի կոչեցեալ կղզին, և բանտարկեալ անդ։ Քննել եւ իմանալ ստուգիւ, թէ ո՞րպիսի ոք էր նա, եւ զի՞նչ ինչ պատահեցան 'ի ժամանակի նորին։ զայս ամենայն պարագայիւք ծանուցանել 'ի Դուռն։ Եւ նորա ժողովեալ զայլազգիս քաղաքին, եհարց ցնոսա, և նոքա ետուն պատասխանի և ասեն, էր նա այր չարագործ, զրպարտիչ և խռովայոյզ, որպէս նախորդ դատաւորն Երուսաղէմի գրեաց զնմանէ, և գտանի արձանագրութիւնն 'ի տումար դատարանի, եւ գտեալ զայն ընթերցան առաջի նորա, յորում գրեալ էր այսպէս։ «Գլխաւորք այլազգեաց Երուսաղէմի և միաբանք Հայոց, հաստատեցին 'ի վերայ Յովհաննիսի՝